

պէ՛տք է որ քաղաքներէ ու տայ մի-  
քակամ հնարաւորութիւններ, «Մա-  
սիս»-ն, անշուշտ, կը լինի Թէոդիկի

գործը շարունակող մի հրատարակու-  
թիւն:

**ԵՐ . ՕՏԵԱՆ՝ «Ընկեր Փանջունի»,**

հրատ. «Նահատակ Գրագէտ. Բարեկամներ»-ի, Իւր 9, Փարիզ, 1935.

«Նահատակ Գրագէտ. Բարեկամներ»-ի  
լոյս ընծայած վերջին հատորը (N9 9)  
յատկացած է ամբողջապէս «Ընկեր  
Փանջունի»-ին: Առնւած է ինչ որ Օտ-  
եանը գրել է այս նշանաւոր «Յեղափո-  
խական»-ի մասին՝ «Առաքելութիւն մը  
ի Ծալլվար», «Ընկեր Փանջունի Վաս-  
պուրականի մէջ» եւ ընկ. Փանջունիի  
«աշխարհահայեացքը» բնորոշող «գրա-  
խօսութիւններ օրւայ հարցերուն շուրջ»:  
Գուրս է մնացել միայն «Ընկեր Փանջու-  
նի տարագրութեան մէջ» անաւարտ հատ-  
ւածը, որ անարժէք է քէ գրական եւ  
քէ Փանջունիի տիպի լրացման տեսակէ-  
տից: Հատորի վերջում դրւած է «Պահ-  
պանողականը»՝ «պոլսական տիպար մը»,  
իսկ սկիզբը՝ Օտեանի ամփոփ կենսա-  
գրականն ու հեղինակութիւնների ցան-  
կը: Գիրքը հրատարակւած է «Ն.Գ.Բա-  
րեկամներ»-ի Մատենաշարին յատուկ  
բժախնդրութեամբ եւ արտաքին վայել-  
չութեամբ:

Անշուշտ, խմբագիրները ծանր խնդրի  
առջեւ են կանգնած եղել Ե.Օտեանի հա-  
տորը կազմելիս. ի՞նչ ընտրել, ո՞րք առ-  
նել Օտեանի անհաշիւ գործերից: Ե.Օտ-  
եանը օրը օրին գրող մարդ էր. արտա-  
դրում էր արագ եւ առատ, անկարգ,  
յաճախ առանց ծրագրի եւ նախօրոք  
կազմած բովանդակութեան: Գրում էր  
ինչ որ գրութեան վայրկեանին գտլիս  
էր գրչին: Շատ անգամ՝ ոչ որպէս ներ-  
շնչում, այլ իբրեւ պարտականութիւն,  
նաեւ «հացի համար»: Այստեղից՝ նրա  
գարամանյի անփութութիւնը, չստեղծ  
համար աւելին, դէպի իբ գրիչն ու գը-  
րութիւնները: Ե. Օտեանի երկերում,  
ագնի ոսկին եւ անպէտք էարբ անֆակ-  
տիկօրէն խառնւած են իբար:

Հատորի խմբագիրները ընդհանուր  
առմամբ միշտ են լուծել խնդիրը՝ Ե.

Օտեանի գրութիւնների դէպից ընտրելով  
«Ընկեր Փանջունին», որովհետեւ այս  
գրւածքը նախ՝ Օտեանի ամենէն մնա-  
յուն գործն է, երկրորդ՝ գեղարեստա-  
կան տեսակէտից՝ ամենէն յաջողւածը եւ  
բնորոշը հեղինակի տաղանդի համար:  
Ե. Օտեանը շատ փայլուն էջեր ունի,  
բայց իր անմահութիւնը պարտական է  
Փանջունիին, որ իբրեւ գրական տիպ  
յաւիտենական է հայոց գրականութեան  
մէջ, ինչպէս յաւիտենական են Արիստո-  
ղոս Ալան, Պեպօն:

«Ընկեր Փանջունի»-ի բոլոր մասերը  
նոյնարժէք չեն: Ամենէն կատարելաւ, ի  
հարկէ, առաջինն է՝ «Առաքելութիւն մը  
ի Ծալլվար»: Այստեղ Օտեանը գործ  
ունի գլխաւորապէս ընդհանուր երե-  
ւոյթների եւ տիպերի հետ: Հեզմանքի  
սուր նշողակը ձեռքին, իսկական ար-  
ւեստագէտի լրջախոհութեամբ եւ հնա-  
րաւոր առարկայականութեամբ նա ներ-  
կայացնում է կեանքի բացասական, ծի-  
ծաղելի կողմերը: Այդ պատճառով նրա  
գրչի տակից դուր են եկել կենդանի եւ  
անմահ տիպեր ու պատկերներ: Ընկեր  
Փանջունի, Տէր Սահակ, Ռէս Սէքօ,  
Խեւ Աւօ, Սմեց վարդան, Քէլէշ Մրկօ,  
Կոյօշեց Սեդօ - ո՞ւմ ծանօթ չեն Օտ-  
եանեան Սահմանադրութիւնից յետոյ  
Պոլսում եւ գաւառներում սունկի պէս  
բուսած այս հերոսները: Ե. Օտեանի  
տաղանդի մեծութիւնը նրանումն է, որ  
նա սուր դիտողութեամբ դիտել է այդ  
հերոսների յատկանշական գծերը եւ խը-  
տացնելով ու ընդհանրացնելով՝ ստեղ-  
ծել է գրական կենդանի տիպարներ:  
Ե. Օտեանը, ընդհանուր առմամբ, իրական  
գծերով ու գեղարեստօրէն վերարտա-  
դրել է եւ այդ հերոսներին յատուկ  
գաղափարներն ու գործերը: «Մի քիչ  
վո՛ղ» - այլեւս մեր կեանքի եւ գրա-

կանուրթեան մէջ մնալուն դարձած խօսք է:

Ինչպէս ասացինք, «Առաքելութիւն մը ի Մալլվար»-ի մէջ Ե. Օտեանը գործ ունի ընդհանուր երեւոյթներն եւ տիպերն հետ եւ ոչ որոշ անձերի կամ հիմնարկութիւններն, այդ պատճառով նրա տւած տիպերն ու գաղափարները շատ աւելի ընդարձակ են, քան Օտեանի ի նկատի ունեցած միջավայրն ու ժամանակը: Փորձեցէք Օտեանի ակնոցով դիտել, օրինակ, այսօրայ թուրքիկեան միջավայրն ու գաղափարները. դուք կը տեսնէք, որ փանջունիութեան ամենէն հարագատ պատկերը թուրքիկմն է: Ընկեր փանջունին՝ դա նոյն ինքն հայ թուրքիկն է, Մալլվարում պատահած դէպքերը այսօր ամէն օր գրեթէ բառացի կերպով կրկնուի են Հայաստանում:

«Կեցցե՛ ազատ սէրը,

«Կեցցե՛ ազատ միութիւնը,

«Անկցի ամուսնական ստրկութիւնը,

«Անկցին ընտանեկան շրջաները,

«Կեցցե՛ն գիտակից շարքերը»-

Ընկեր փանջունին Մալլվարում յօրինած Բռուցիկի այս տողերը հա ամէն օր կարդում ենք «Երկիր»-ը. Հայաստան»-ի էջերում:

Կամ քիչ յետոյ, ընկ. փանջունին կազմակերպած քաղաքացիական ամուսնութիւնը վանում տառացի պատկերը չէ՞ այսօրայ Հայաստանի «Զագս»-եան հոշակաւոր ամուսնութիւններին:

Հաւանական է, այս է պատճառը, որ երեւանում մինչեւ այժմ «Առաքելութիւն մը ի Մալլվար» արգելած պըտուր է եւ չի մտել Ե. Օտեանի գործերի հրատարակելիք հատորների մէջ:

Անհամեմատ աւելի քոյլ են ընկ. փանջունին յաջորդ մասերը, որոնք գեղարեստական ստեղծագործութիւն լինելուց աւելի պարզ լրագրական պարսաւագրեր են: Ե. Օտեանը այստեղ դուրս է եկել անաչառ արեստագէտի դերից եւ դարձել է պայքարող կողմ. փոխանակ գրադելու ընդհանուր երեւոյթներով ու տիպերով, նա գրադուս

է քանձրացեալ կազմակերպութիւններով եւ անձերով: Եւ գրադուս է որպէս հակառակորդ, մանր - մունր անարժան հաշիւներ մաքրող: Միանալով հակադաշնակցական նեղմիտ ու կուսգան արքային՝ նա կուսակցական առօրեայ կըռիւ է վարում: «Ընկեր փանջունի վասպուրականի մէջ», բայց, մանաւանդ, «իմ աշխարհահայեացքները» շատ հեռու են գեղարեստական կատարելութիւնից եւ աւելի շուտ պատկերացնում են Ե. Օտեանի քաղաքական ու քաղաքացիական նկարագրի քերութիւնները: Օտեան այդտեղ Դաշնակցութեան վզին է բարդում բոլոր այն անհիմն եւ ակնյայտնի կերպով չարակամութիւնից բխող արաստանութիւնները, որոնցով ժամանակի «շէրիքներ» մամուլը աշխատում էր սեւացնել Դաշնակցութիւնը: Աղքատար վանք, Սանասարեան վարժարանի տեղափոխութիւն, Եփրեմի փոստ, Պատրիարքարան, Խորհրդարանական ընտրութիւններ, Բարեգործական, վասպուրականում պատահող դէպքեր - ժամանակին պոլսահայ մամուլը անագին աղմուկ բարձրացրեց այս խնդիրների շուրջ՝ հագար ու մէկ մեղք վերագրելով Դաշնակցութեան: Այդ խնդիրները կազմում են Ընկ. փանջունին երկրորդ եւ երրորդ մասի բովանդակութիւնը: Ե. Օտեանն այդտեղ կրճատ եւ միակողմանի հրապարակագիր է եւ ոչ գեղարեստագէտ: Այդ պատճառով, մինչ «Առաքելութիւն մը ի Մալլվար» սահմանած է մնալու անմեռ, այս մասը գրած օրն իսկ արդէն անարժէք էր հայոց գրականութեան համար՝ քէեւ, անկասկած, մէջը պատահում են եւ գեղարեստական բարձր շնորհով օժտուած էջեր:

Ինչպէս ռուսական ասածն է ասում, «երգից բառ կարելի չէ դուրս ձգել»: «Նահ. Գրագ. Բարեկամներ»ը լաւ են արել, որ Ընկ. փանջունին տւել են արքայութեամբ, առանց նրանից մասեր դուրս ձգելու: Դրանով նրանք ցոյց են տւել գրական լայնախոհութեան եւ իրենց պաշտօնի գիտակցութեան օրինակ:

Ե. Օտեանի ժամանակի դէպքերը այսօր այլեւս պատմութիւն են. քէն Ընկ. Փանջունիի վերջին մասերը այդ պատմութեան խեղաքիւրումն են, մի տեսակ ծուռ հայելին, բայց մենք ի վիճակի ենք միշտը սխալից գատելու, որոնք ցորենից ջոկելու: Այն ինչ որ մշմարիտ է ու մընայում՝ կապրի յաւիտեան Ե. Օտեանի գործում. սուտն ու սխալը կը մեռնեն ժամանակի ընթացքում:

Պատմում են, որ «Առաքելութիւն մը ի Ծալվար»-ի լոյս տեսնելուց յետոյ, Սիւնն Զուարեանը հանդիպելով Ե. Օտ-

եանին՝ բարեկամօրէն ծեծել է ուսը եւ ասել.

- Պ. Օտեան, եթէ ես դրամ ունենայի, Փանջունիէդ հինգ հազար օրինակ կը տպէի եւ կը տարածէի մեր բոլոր ընկերների մէջ...:

Մեծագոյն գովեստը, որ Ե. Օտեանը կարող էր լսել իր գործի համար:

Ս. Զուարեանի բաղձանքը, համեստ սահմաններում, իրագործել են անա՛հա. Գրագ. Բարեկամները: Հասարակութեան կր մնայ կարգալ ու տարածել:

Ս. Վ.

ՅՈՒՍԻԿ ԱՐՔԵՊ. ԶՈՀՐԱՊԵԱՆ՝

«Հայոց Եկեղեցու պատմութիւնը» (ուսմաներէն).

Ռուսմանիայի հայ ազգաբնակութեան այն մասը, որ դեռ պահել է ազգային կրօնը, բաժանուում է երկու հատուծի. հին բնակիչները, որոնք կորցրել են մայրենի լեզուն եւ մինչեւ վերջերս խօսում էին քիւրճերէն, իսկ այժմ սկսում են խօսել ռուսմաներէն, եւ նորերը, որոնք գլխաւորապէս գաղթած են Թիւրքիայից՝ հալածանքների եւ կոտորածների հետեւանալով: Այս վերջինները պահել են հայերէն լեզուն ու իրենց գաւակներին, գէթ նախնական շրջանում, տալիս են ազգային կրթութիւն:

Յուսիկ Արքեպ.-ի ներկայ գիրքը պատրաստած է գլխաւորապէս առաջին կարգի հայերի համար, որպէսզի նրանք հասկանալի լեզուով ծանօթանան իրենց ժողովրդի եւ ազգային եկեղեցու անցեալին: Բնականաբար, հեղինակի նըպատակն է զարթեցնել այդ մարդկանց մարած կամ մարող ազգային գիտակցութիւնը եւ աւելի ամուր կապերով կապել ազգային հաւաքականութեան հետ:

Յուսիկ Արքեպանի անունը, նրա գարգացումը և հայ ժողովրդի ու եկեղեցու պատմութեան խորունկ ծանօթութիւնը պէտք չունեն մեկնութեան: Նա տւել է գեղեցիկ կազմած, հանրամատչելի ու յստակ մի գործ, որի բերելիք օգուտը վեր է ամէն կասկածից: Հեղինակը մեծ հմտութեամբ իրար հետ է կապել ազգային եւ եկեղեցական պատմութիւնը եւ առանց գիրքը երկրորդական մանրամասնութիւններով խնդրելու, տւել է պարզ ու յստակ պատկերը հայ ժողովրդի անցեալ մակատագրի:

Յուսիկ Արքեպ.-ի ընտրած ուղին - գիտութիւն եւ պատմական մշտարտութիւն - լաւագոյն ուղին է հասնելու համար ուժացած եւ ուժացող հայ բեկորների սրտին: Յուսանք որ այս մէկ գործով չի սահմանափակւի նրա աշխատանքը. նա նոր աշխատութիւններ էլ կը ստայ ռուսմանցած հայերի մէջ ազգային գգացումը արթնացնելու համար:

Թ. Զ.

